# Համաձայնագիր-2
# 12.01.2021թ. կնքված N ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/3 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

**ք. Երևան** «21» հունվարի 2022թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի մի կողմից, և «Պահապան 1» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս տնօրեն՝ Ա.Վանեցյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ և 4-րդ ենթակետերով և հիմք ընդունելով 12.01.2021թ. կնքված N ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/3 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը որոշեցին՝**

1. Պայմանագրի 7.6-րդ կետին համապատասխան երկարաձգել Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը 30 օրացուցային օրով և փոփոխել Պայմանագրի գինը՝ ավելացնելով Պայմանագրի գումարը 43 619 178 (Քառասուներեք միլիոն վեց հարյուր տասնինը հազար մեկ հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամով, այն սահմանելով 574 319 178 (Հինգ հարյուր յոթանասունչորս միլիոն երեք հարյուր տասնինը հազար մեկ հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամ:

2. Հաստատել 2022 թվականին Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

3. 12.01.2021թ. կնքված N ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/3 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված 2022 թվականին մատուցման ենթակա ծառայությունների պայմանները տարածել 2022 թվականի հունվարի 1-ից ծագած փաստացի հարաբերությունների նկատմամբ:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պետական եկամուտների կոմիտե | «Պահապան 1» ՍՊԸ |
| ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 | ք.Երևան, Ավան, Քուչակ թաղ. 16/2 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011054013 | Հ/Հ 1150019206166199 |
| ՀՎՀՀ 02647057 | ՀՎՀՀ 00925301 |
| ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝ | «Պահապան 1» ՍՊԸ-ի տնօրեն՝ |
| Է.Գևորգյան | Ա.Վանեցյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված
Հաստատված է
«12» հունվարի 2021թ. կնքված
N ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/3 գնման պայմանագրի փոփոխությամբ

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**ՀՀ դրամ**

| Հ/Հ | Ծառայության անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը* | Նախատեսվում է ֆինանսավորել 2022թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | Մինչև 2022 թվականի դեկտեմբերի 25-ը | **Ընդամենը Տարի** |
| 1 | Պահնորդական ծառայություններ | 4217 | | 74 152 604 | 74 152 604 | 74 152 604 | 74 152 604 | 74 152 604 | 74 152 604 | 74 152 604 | 74 152 604 | 74 152 604 | 74 152 604 | 74 152 604 | **74 152 604** |

*Վճարման գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057

ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

**Է.Գևորգյան**
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Պահապան 1» ՍՊԸ
ք.Երևան, Ավան, Քուչակ թաղ. 16/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1150019206166199
ՀՎՀՀ 00925301

«Պահապան 1» ՍՊԸ-ի տնօրեն՝

**Ա.Վանեցյան**
(ստորագրություն)
Կ.Տ